

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

Տավուշ

## ՔԻՄԻԱ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի սոուզվում: Սոուզվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

**1** Ո՞ր համակարգի բաղադրիչները կարելի է բաժանել թորման եղանակով.

- ա) շաքարի և կերակրի աղի ջրային լուծույթի  
բ) ամոնիումի նիտրիտի ջրային լուծույթի  
զ) ացետոնի ջրային լուծույթի  
դ) ացետոնի սպիրտային լուծույթի  
ե) քացախաթթվի ջրային լուծույթի  
զ) նավթի
- 1) ա, բ, ե, զ  
2) զ, դ, ե, զ  
3) ա, բ, զ, դ  
4) բ, զ, դ, ե

**2** Ո՞ր քիմիական նշան է ճիշտ ներկայացնում այն մասնիկը, որը պարունակում է 17 պրոտոն, 18 նեյտրոն և 18 էլեկտրոն.

- 1)  $^{40}\text{Ar}^0$   
2)  $^{38}\text{Ar}^0$   
3)  $^{35}\text{Cl}^{-1}$   
4)  $^{37}\text{Cl}^{-1}$


**3** Ո՞ր տարրերակում է ճիշտ ներկայացված քիմիական տարրը և նրա բնութագրիչները:

	Տարրի նշան	Տարրի տեսակ (s,p,d,f)	Պարբերու թյուն	Խումբ	Ճիմնական վիճակում չգուգված էլեկտրոնների թիվ
1)	Cu	s	4	I	1
2)	Cr	d	4	VI	6
3)	Sr	p	5	II	0
4)	Mg	p	3	II	2

- 4 Ո՞ր տարրերակում է ձիշտ ներկայացված նյութի բանաձևը, դրանում կապի և բյուրեղավանդակի տեսակները, նյութի կառուցվածքը և բնորոշ ֆիզիկական հատկությունները:

	Նյութի բանաձ և	Կապի տեսակ	Բյուրեղավա նդակի տեսակ	Նյութի կառուցվածք	Բնորոշ ֆիզիկական հատկություն և պատճառը
1)	NaCl	իոնային	իոնային	մոլեկուլային	Հալված կամ լուծված վիճակում հաղորդիչ է
2)	C <sub>(ալմաստ)</sub>	կովալենտայի ն ոչ բներային	մոլեկուլայի ն	հսկա կովալենտային	հալման և եռման բարձր ջերմաստիճան
3)	H <sub>2</sub> O	կովալենտայի ն բներային	ատոմային	հսկա իոնային	Հալման և եռման ցածր ջերմաստիճան
4)	SiO <sub>2</sub>	կովալենտայի ն բներային	ատոմային	հսկա կովալենտային	Կարծրություն և հալման բարձր ջերմաստիճան

- 5 Հետևյալ ուրվագրերից ո՞ր(ո՞ք)ն է(են) համապատասխանում ջերմանցատիչ  
ռեակցիային.



- 1) և՝ α, և՝ β
- 2) ո՞չ α-ն, ո՞չ β-ն
- 3) միայն α
- 4) միայն β

**6**

Իրականացրել են ֆուֆորական թթվի չեզոքացման էնթալպիայի որոշման փորձը:  
 Փորձի ընթացքում չափել են որոշովի գանգվածով նատրիումի հիդրօքսիդի և  
 ֆուֆորական թթվի լուծույթների միջև ընթացող չեզոքացման ռեակցիայի  
 ջերմաստիճանի փոփոխությունը՝ սկզբնական և առավելագույն  
 ջերմաստիճանների տարբերությունը։ Ստորև բերված ո՞ր բանաձևն են  
 օգտագործում ռեակցիայի ընթացքում անջատված ջերմության քանակը հաշվելու  
 համար։

- 1)  $Q = \Delta U + A$
- 2)  $H = PV + U$
- 3)  $q = C_p \cdot m \cdot \Delta T$
- 4)  $C_v = dU/dT$

**7**

Հետևյալ կատիոններից որո՞նք կարող են ցուցաբերել վերականգնիչ հատկություն.  
 ա)  $Al^{3+}$ , բ)  $Cr^{3+}$ , ց)  $Zn^{2+}$  դ)  $Fe^{2+}$ , ե)  $Na^+$ , զ)  $Mn^{2+}$ ,  
 ի)  $Ca^{2+}$ , լ)  $Cu^+$ .

- 1) բ, զ, դ, ց, լ
- 2) բ, զ, ե, ց
- 3) բ, դ, ց, լ
- 4) ա, բ, զ, ե, լ

**8**

Հետևյալներից ո՞րն է բնեռային մոլեկուլի բանաձևը.

- 1)  $BH_3$
- 2)  $C_2H_2$
- 3)  $SiH_4$
- 4)  $NH_3$

**9**

Տրված են  $HCN$ ,  $HF$ ,  $HBr$ ,  $HCl$  նյութերի 10 % զանգվածային բաժիններով  
 10-ական գ լուծույթներ։ Ո՞ր լուծույթում է պարունակվում լուծված նյութի  
 ամենամեծ քանակությունը (մոլ)։

- 1)  $HBr$
- 2)  $HCl$
- 3)  $HCN$
- 4)  $HF$

10

Հետևյալ գործոններից որո՞նք են պայմանավորում ջրային լուծույթում կեկտրոլիտի իոնների դիսոցման գործընթացը. *ա) կեկտրական հոսանքը, բ) կեկտրոլիտում գոյություն ունեցող քիմիական կապերի բնույթը, գ) լուծիչի բնույթը, դ) կեկտրոդների միջև եղած հեռավորությունը.*

- 1) ա, բ
- 2) բ, դ
- 3) գ, դ
- 4) բ, գ


11

Քանի՞ անգամ է թթվածնի մեկ ատոմի զանգվածը մեծ գ.ա.մ.-ից.

- 1)  $2,66 \cdot 10^{-23}$
- 2)  $5,32 \cdot 10^{-23}$
- 3) 16
- 4) 32

12

Տրված են դարձելի ռեակցիաների հավասարումներ.



Ո՞ր դեպքերում ճնշման իջեցումը հավասարակշռության տեղաշարժ չի առաջացնի.

- 1) ա, բ, գ
- 2) գ, է, զ
- 3) ա, բ
- 4) զ, դ

13

Տարբեր փորձանոթներում գտնվող նատրիուսի հիդրիդի, մագնեզիումի և ալյումինի առվագատների նմուշները մշակել են ջրով: Որքա՞ն է ալկալու լուծույթի ավելցուկում չլուծվող առաջացած նատվածքի մոլային զանգվածը (գ/մոլ).

- 1) 120
- 2) 78
- 3) 58
- 4) 378

**14**

$^{241}_{94}Pu$  իզոտոպը ստացվում է  $^{238}_{92}U$  իզոտոպը հելիումի միջուկով ռմբակոծելիս:  $\Omega^*$  մասնիկն է գոյանում պլուտոնիումի հետ միասին.

- 1)  $\beta$
- 2)  $^2_1H$
- 3)  $^1_1H$
- 4)  $^1_0n$

**15**

Կարբոնատները հայտաբերելու համար օգտագործում են նյութ, որը ջրային լուծույթում դիսուլվելիս ո՞ր իոնը կառաջանա.

- 1)  $OH^-$  (ալկալու ձևով)
- 2)  $CH_3OO^-$  (աղի ձևով)
- 3)  $H^+$  (ուժեղ թթվի ձևով)
- 4)  $NO_3^-$  (աղի ձևով)

**16**

Ի՞նչ փոփոխություն է կրում ծծմբական թթվի լուծույթը՝ վերջինս իներտ էլեկտրոդներով էլեկտրոլիզի ենթարկելիս.

- 1) լուծույթը նոսրանում է
- 2) լուծույթը խտանում է, հետո նոսրանում
- 3) փոքրանում է  $H_2SO_4^-$ -ի կոնցենտրացիան
- 4) մեծանում է  $H_2SO_4^-$ -ի կոնցենտրացիան

**17**

Անհայտ աղը լուծվում է ջրում և փոխազրում նատրիումի հիդրօքսիդի հետ: Աղը բոցը ներկում է դեղին գույն, իսկ աղի լուծույթը թթվային է:  $\Omega^*$  ն է այդ աղը.

- 1)  $CaHPO_4$
- 2)  $HCOOK$
- 3)  $NaNO_3$
- 4)  $NaH_2PO_4$

**18**

Հայտնի է որ կովալենտային կապն ունի ուղղվածություն:  $\Omega^*$  շարք ներառված նյութերի մոլեկուլներում է ոյսետքում այս երևույթը.

- 1)  $HBr$ ,  $NaCl$
- 2)  $H_2$ ,  $Al_2O_3$
- 3)  $CH_4$ ,  $HCl$
- 4)  $HF$ ,  $Ag$

19

Համապատասխանեցնել քիմիական ռեակցիայի տեսակը, ընթացող ռեակցիայի մոլեկուլային հավասարման ձախ մասը և այդ հավասարման գործակիցների գումարը.

քիմիական ռեակցիաների տեսակ	մոլեկուլային հավասարման ձախ մաս	մոլեկուլային հավասարման գործակիցների գումար
ա) զագի անջատումով ընթացող տեղակալման ռեակցիա բ) տեղակալման ռեակցիա մետաղների մասնակցությամբ շ) երկու աղերի փոխանակման ռեակցիա ջրային լուծույթում դ) քայքայման ռեակցիա՝ որպես ջերմականիչ ռեակցիա ե) իոնափոխանակային ռեակցիա՝ ջրում լուծելի թույլ էլեկտրոլիտի առաջացմամբ	1) $2\text{Al} + 2\text{NaOH} + 2\text{H}_2\text{O} \rightarrow$ 2) $\text{Na}_2\text{CO}_3 + \text{CaCl}_2 \rightarrow$ 3) $2\text{CH}_3\text{COONa}_{(\text{զ})} + \text{H}_2\text{SO}_4_{(\text{զ})} \rightarrow$ 4) $\text{Fe} + \text{CuSO}_4 \rightarrow$ 5) $\text{Cu}_2(\text{OH})_2\text{CO}_3 \rightarrow$ 6) $\text{NH}_4\text{OH}_{(\text{զ})} + \text{KNO}_3_{(\text{զ})} \rightarrow$ 7) $3\text{Cu} + 8\text{HNO}_3_{(\text{նոր})} \rightarrow$ 8) $\text{CuSO}_4_{(\text{զ})} + 2\text{KCl}_{(\text{զ})} \rightarrow$ 9) $2\text{H}_2\text{O}_2 \rightarrow$	Ա) 6 Բ) 11 Գ) 10 Դ) 5 Ե) 4 Զ) 20

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ.

- 1) ա1Բ, բ4Ե, զ2Դ, Դ9Դ, ե3Ա
- 2) ա1Բ, բ7Զ, զ2Դ, դ5Դ, ե3Ա
- 3) ա1Բ, բ4Ե, զ2Դ, դ5Դ, ե3Ա
- 4) ա7Զ, բ4Ե, զ8Գ, դ9Ա, ե6Ե

20

Բերված արտահայտություններից որո՞նք պետք է կիրառել նյութի լուծելիությունը ջրում սահմանելիս.

ա) գերհազեցած լուծույթ, բ) լուծված նյութի առավելագույն գանգված,  
շ) էմուլսիա, դ) տվյալ ջերմաստիճան, ե) 1000 մլ լուծույթ, զ) 100 գ կամ 1000 մլ ջուր.

- 1) ա, զ, ե
- 2) բ, դ, ե
- 3) ա, բ, զ
- 4) բ, դ, զ

**21** Ցինկի ձողը են ծծմբական թթվի լուծույթի մեջ ընկումնելիս ընթացել է  
 $Zn + 2H^+ = Zn^{2+} + H_2 \uparrow$  ռեակցիան։ Ո՞ր շարք ներառված մետաղներից յուրաքանչյուրի հետ ցինկի ձողը լուծույթում հպման մեջ դնելիս այդ ռեակցիայի արագությունը կմեծանա.

- 1) Al, Mg, Cr
- 2) Ag, Mg, Cr
- 3) Sn, Ag, Cu
- 4) Au, Al, Mg

**22** Նշված նյութերից ո՞րը պետք է ավելացնել  $Zn(NO_3)_2$  լուծույթին՝ աղի հիդրոլիզը ճնշելու համար.

- 1) NaOH
- 2) H<sub>2</sub>O
- 3) NaCl
- 4) HCl

**23** Քլորի և ջրածնի խառնուրդը, որում քլորի ծավալային բաժինը 0,6 է, անցկացրել են լակմուս պարունակող ջրի մեջ. Ինչպես սկզբանի լակմուսի գույնը.

- 1) կղառնա վարդագույն
- 2) կգունաժափվի
- 3) կկարմրի
- 4) կկապտի

**24** Փոխարկումների հետևյալ  $Cl_2 \rightarrow HCl \rightarrow Cl_2 \rightarrow KClO_3 \rightarrow O_2 \rightarrow H_2O$  շղթան իրականացնելու համար ո՞ր շարք են ներառված ավելացվող ռեագենտների և փոխարկումներն իրականացնելու պայմանների ճիշտ հաջորդականությունը.

- 1)  $H_2$  ( $h\nu$ ),  $KMnO_4$ ,  $KCl$ ,  $t^\circ$  և կատ.,  $H_2$
- 2)  $H_2O$ ,  $MnO_2$ ,  $KOH$  ( $\text{լ-թ. } 100^\circ C$ ),  $KNO_3$ ,  $H_2O_2$
- 3)  $H_2$  ( $h\nu$ ),  $CH_4$ ,  $KOH$ ,  $t^0$ ,  $H_2$
- 4)  $H_2$  ( $h\nu$ ),  $KMnO_4$ ,  $KOH$  ( $\text{լ-թ. } 100^\circ C$ ),  $t^\circ$  և կատ.,  $H_2$

(25-26) Նատրիումի և ամոնիումի նիտրատների հավասարամոլային խառնուրդի ջերմային քայլայումից ստացված նյութերը ֆուֆորի(V) օքսիդ պարունակող խողովակով անցկացնելիս վերջինիս զանգվածն ավելացել է 7,2 գրամով:


25

Որքա՞ն է ստացված չոր գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ հելիումի.

- 1) 20
- 2) 40
- 3) 5
- 4) 10

26

Բերված կորերից ո՞րն է համապատասխանում սկզբնական խառնուրդի զանգվածի փոփոխությանը.



27

Ո՞րն է  $CuO + H_2SO_4 = CuSO_4 + H_2O$  ռեակցիայի կրծատ իոնային հավասարումը.

- 1)  $Cu^{2+} + H_2SO_4 = CuSO_4 + 2H^+$
- 2)  $CuO + 2H^+ = Cu^{2+} + H_2O$
- 3)  $2H^+ + 2OH^- = 2H_2O$
- 4)  $Cu^{2+} + SO_4^{2-} = CuSO_4$

28

Ո՞ր ռեակցիում է մանգանի (IV) օքսիդը կիրառվում որպես կատալիզատոր.

- 1)  $2KClO_3 = 2KCl + 3O_2$
- 2)  $2H_2O = 2H_2 + O_2$
- 3)  $4KClO_3 = KCl + 3KClO_4$
- 4)  $2KNO_3 = 2KNO_2 + O_2$

29

Որո՞նք են ջրի ժամանակավոր կոշտության վերացման ռեակցիաների հավասարումներ.

- ա)  $\text{Ca}(\text{HCO}_3)_2 + \text{H}_2\text{SO}_4 \rightarrow \text{CaSO}_4 + 2\text{H}_2\text{O} + 2\text{CO}_2$
- բ)  $\text{Ca}(\text{HCO}_3)_2 + \text{Ca}(\text{OH})_2 \rightarrow 2\text{CaCO}_3 + 2\text{H}_2\text{O}$
- գ)  $\text{Mg}(\text{HCO}_3)_2 + \text{Na}_2\text{CO}_3 \rightarrow \text{MgCO}_3 + 2\text{NaHCO}_3$
- դ)  $\text{MgSO}_4 + \text{Na}_2\text{CO}_3 \rightarrow \text{MgCO}_3 + \text{Na}_2\text{SO}_4$

- 1) գ, դ
- 2) ա, դ
- 3) ա, բ
- 4) բ, գ

30

Դեկանը կրեկինզի ենթարկելիս ստացվել է նույն թվով ածխածնի ատոմներ պարունակող միայն ալկանի և ալկենի խառնուրդ : Դրանցից մեկը կարող է հանդես գալ երկրաչափական իզոմերների ձևով: Ո՞րն է այդ միացության անունը.

- 1) հեքսեն-2
- 2) պենտեն-2
- 3) բութեն-2
- 4) 2-մեթիլբութեն-2

31


Ինչպե՞ս են անվանում նկարում պատկերված էնանտիոմերներն համապատասխանաբար.



- 1) (R)- կաթնաթթու և (S)- կաթնաթթու
- 2) (R)-ալանին և (S)- ալանին
- 3) (S)- բութան-2-ոլ և (R)-բութան-2-ոլ
- 4) (S)- կաթնաթթու և (R)-կաթնաթթու

32


Ո՞ր շարքում են  $X_1$ ,  $X_2$  և  $X_3$  նյութերն ըստ հետևյալ փոխարկումների.



- 1) կալցիումի կարբոնատ, ածխածնի(IV) օքսիդ,  $\beta$ -գլուկոզ
- 2) կալցիումի կարբիդ, ածխածնի(IV) օքսիդ,  $\alpha$ -գլուկոզ
- 3) կալցիումի կարբիդ, ածխածնի(II) օքսիդ, ֆրուկտոզ
- 4) կալցիումի կարբիդ, ածխածնի(II) օքսիդ, գլուկոզ

33

Հետևյալ ռեակցիաներից ո՞րն է ընթանում է  $\text{Sn}_2$  մեխանիզմով.



- 2)  $\text{CH}_2=\text{CH}_2 + \text{Br}_2 \rightarrow \text{CH}_2\text{Br} - \text{CH}_2\text{Br}$
- 3)  $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{Cl} + \text{KOH}_{(\text{լուծ.})} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{OH} + \text{KCl}$
- 4)  $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{Cl} + \text{KOH}_{(\text{սպիրտ})} \rightarrow \text{CH}_3\text{CH}=\text{CH}_2 + \text{KCl} + \text{H}_2\text{O}$

34

Ո՞ր շարքում է ճիշտ ներկայացված հալոգենալկանների հիդրօքսիդ իոններով նույնագույն տեղակալման ռեակցիայի արագության նվազման կարգը.

- 1)  $\text{R-Br} > \text{R-F} > \text{R-Cl}$
- 2)  $\text{R-F} > \text{R-Br} > \text{R-Cl}$
- 3)  $\text{R-Br} > \text{R-Cl} > \text{R-F}$
- 4)  $\text{R-F} > \text{R-Cl} > \text{R-Br}$

(35-36)  $\text{C}_3\text{H}_6\text{O}_2$  բաղադրությամբ միացությունը ալկալու ջրային լուծույթի հետ տարացնելիս առաջացնում է սպիրտ և աղ: Հայտնի է, որ աղին համապատասխանող կարբոնաթթվի և խիտ ծծմբական թթվի փոխազդեցությունից անջատվում է զազային նյութ:

35

Հետևյալ նյութերից ո՞րն է բավարարում փորձի պայմանին.

- 1) քացախաթթվի մեթիլէսթեր
- 2) մրջնաթթվի մեթիլէսթեր
- 3) պրոպանաթթու
- 4) մրջնաթթվի էթիլէսթեր

36

Քանի ՞իզոմեր ունի փորձի պայմանին բավարարող նյութը.

- 1) 2
- 2) 3
- 3) 0
- 4) 1

(37-38) Համապատասխան պայմաններում փոխազդել են հազեցած միահիմն կարբոնաթթուն և հազեցած միատում սպիրտը: Ստացված արգասիքում թթվածնի զանգվածային բաժինն է 43,24%,


37

Որքա՞ն է ստացված արգասիքի մեկ մոլեկուլում ատոմների գումարային թիվը:

- 1) 8
- 2) 12
- 3) 11
- 4) 14

38

Ո՞ր նյութերն են փոխազդել, եթե ստացված արգասիքի  $^1\text{H}$  ՄՄՌ սպեկտրը հետևյալն է.



- 1) քացախաթթուն և էթանոլը
- 2) մրջնաթթուն և էթանոլը
- 3) քացախաթթուն և մեթանոլը
- 4) մրջնաթթուն և մեթանոլը

39

Ո՞ր միացությունը և ի՞նչ զանգվածով (գ) կստացվի, եթե 46 գ ամինաքացախաթթվի ամոնիումային աղը հաջորդաբար մշակվի նատրիումի հիդրօքսիդով, իսկ հետո աղաթթվի ավելցուկով.

- 1) ամինաքացախաթթվի նատրիումական աղ, 1115
- 2) ամինաքացախաթթվի նատրիումական աղ, 557,5
- 3) ամինաքացախաթթվի քլորաջրածնական աղ, 55,75
- 4) ամինաքացախաթթվի քլորաջրածնական աղ, 111,5

**40** Հետևյալ ո՞ր նյութերը կիոխազդեն  $Cu(OH)_2$ -ի հետ առաջացնելով է մուգ կապույտ լուծույթ.

ա)  $qJhgkphn$ , բ)  $\phi k n o l$  ց)  $\phi p r m a l h n$ , դ)  $H_6H_{12}O_6$  ( $qJpniknq$ ), ե)  $kphawnpl$   
ց)  $qJhgjh_n$ ,

- 1) բ, զ, ե
- 2) ա, դ, զ
- 3) ա, զ
- 4) ա, դ

**41** Որոշակի ծավալով (ն. պ.) թթվածնի և ավելցուկով վերցրած ջրածնի խառնուրդը պայթեցնելիս առաջացել է 135 գ ջուր։ Որքանո՞վ է կրծատվել խառնուրդի ծավալը (լ, ն. պ.) սկզբնական պայմանների բերելուց հետո։

- 42** Հաստատուն ճնշման տակ ընթացող  $2\text{CO}_{(\text{քագ})} + \text{O}_{2(\text{քագ})} \rightarrow 2\text{CO}_{2(\text{քագ})}$  համասեռ ռեակցիայի միջին արագությունն ըստ  $\text{CO}-\text{ի}$  հավասար է  $0,05 \text{ մոլ}/\cdot\text{վրկ}$ , իսկ  $\text{CO}$  նյութի սկզբանական կոնցենտրացիան՝  $4,0 \text{ մոլ}/\text{l}$ : Քանի վայրկյան հետո  $\text{CO}$  նյութի կոնցենտրացիան կդառնա  $2,5 \text{ մոլ}/\text{l}$ :
- 43** Ծծումբ պարունակող զազային միացության խտությունը  $47^\circ\text{C}$ -ում և  $86,32 \text{ կ}\cdot\text{Պա}$  ճնշման պայմաններում  $2,6 \text{ գ}/\text{l}$  է: Որքան է միացության հարաբերական խտությունն ըստ հելիումի ( $R = 8,3 \text{ } \Omega/\text{մոլ} \cdot \text{Կ}, T = 273 \text{ Կ}$ ):

44

Ազոտային թթվի լուծույթում իոնների չտրոհված մոլեկուլների քանակը 4,5 անգամ գերազանցում է  $\text{H}_3\text{O}^+$  և  $\text{NO}_2^-$  իոնների գումարային քանակը:  
Ի՞նչ զանգվածով(գ) հիդրօքսոնիում իոն կառաջանա 75 լ 0,4 մոլ/լ կոնցենտրացիայով ազոտային թթվի լուծույթում:

45

49 զ օրթոֆոսփորական թթու պարունակող 838,75 գ ջրային լուծույթին 38,75 գ կալցիումի ֆոսֆատ ավելացնելիս ստացվել է թափանցիկ նոր լուծույթ: Որքան է այդ լուծույթում գոյացած աղի զանգվածային բաժինը (%):

(46-47) Կալցիումի, կալցիումի օքսիդի և կալցիումի հիդրիդի  $1 : 3 : 2$  մոլային հարաբերությամբ 219 գ զանգվածով խառնուրդին ավելացրել են այնքան ջուր, որ նոր ստացված նյութի զանգվածային բաժինը լուծույթում դարձել է 24 %:

46 Որքա՞ն է ավելացրած ջրի զանգվածը (գ):

47 Որքա՞ն է սկզբնական խառնուրդի և ջրի փոխազդեցությունից ստացված գազի ծավալը (լ, ն. պ.):

(48-49) *Ալիքատիկ շարքի ամինների հոմոլոգիական շարքում երկու հարևան ամինների հավասարամոլային խառնուրդն այրել են: Պարզվել է, որ լրիվ այրման համար ծախսված թթվածնի ծավալը 1,25 անգամ մեծ է ստացված ջրային գոլորշու ծավալից:*

48

Որքա՞ն է ավելի շատ թվով ածխածնի ատոմներ պարունակող հոմոլոգի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

49

Որքա՞ն է ավելի փոքր թվով ածխածնի ատոմներ պարունակող հոմոլոգի բանաձևն ունեցող հնարավոր իզոմերային ամինների ընդհանուր թիվը:

(50-51) Լիթիումի նիտրիդի և հիդրիդի խառնուրդը, որում լիթիում տարրի զանգվածային բաժինը 70 % է, մշակել են ջրով և անջատված զագային խառնուրդն անցկացրել տաքացրած պղնձի(II) օքսիդ պարունակող խողովակի միջով: Գազերի լրիվ փոխազդեցությունից հետո վերականգնման արդյունքում առաջացել է 256 գ զանգվածով պղինձ:

50 Որքա՞ն է եղել ելային խառնուրդի զանգվածը (գ):

51 Ի՞նչ զանգվածով (գ) ջուր է ստացվել ռեակցիաների ընթացքում:

(52-53) Էսթերացման ռեակցիայի համար տրված է եղել 1 լիտրում՝ 40 մմոլ քացախաթթու, 40 մմոլ էթանոլ և 0,5 մմոլ ծծմբական թթու (որպես կատալիզատոր) պարունակող զազային խառնուրդ: Հավասարակշռություն հաստատվելուց հետո խառնուրդում հայտնաբերվել է  $0,18$  գ ջուր: Համարել, որ ռեակցիայի հետևանքով խառնուրդի ծավալի փոփոխություն տեղի չի ունեցել:

52

Որքա՞ն է էսթերացման ռեակցիայի միջին արագությունը [մմոլ/(լ. ր.)], եթե նշված փոխարկումը կատարվել է 5 ր ժամանակահատվածում:

53

Տաքացման պայմաններում առավելագույնը ի՞նչ նյութաքանակով (մմոլ) նատրիումի հիդրօքսիդ կարող է փոխազդել ստացված հավասարակշռային խառնուրդի հետ:

- (54-55) Պղնձեկ իրն արծաթապատելու նպատակով այն օգտագործել են որպես կաթող (որպես անող ծառայել է զրաֆիտե հեկտրոդը) և իրականացրել արծաթի նիտրատ պարունակող 98,61 գ ջրային լուծույթի հեկտրոլիգ: Էլեկտրոլիզը դադարեցրել են, երբ պղնձեկ իրի զանգվածն ավելացել է 3,24 գրամով, իսկ անողի վրա անջատվել է 560 մլ (ն. պ.) զազ:


54

Որքա՞ն է կաթողի վրա անջատված զազի ծավալը (մլ, ն. պ.):

55

Որքա՞ն է թթվի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

(56-58) Էթանի այրման ռեակցիայի հավասարումն է.



իսկ ռեակցիային մասնակցող նյութերի գոյացման ջերմություններն են.

$$Q_{\text{գոյ}}(CO_2) = 394 \text{ կՋ/մոլ}, Q_{\text{գոյ}}(H_2O) = 286 \text{ կՋ/մոլ}, Q_{\text{գոյ}}(C_2H_6) = 88 \text{ կՋ/մոլ}:$$

56

Որքա՞ն է էթանի այրման ռեակցիայի ջերմությունը (կՋ/մոլ):

57

Ի՞նչ քանակով ջերմություն (կՋ) կանչատվի 60 գ էթանն այրելիս:

58

Ի՞նչ զանգվածային բաժնով (%) առ կառաջանա 15 գ էթանի այրման արգասիքները 168 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 481 գ լուծույթի մեջ անցկացնելիս:

- (59-61) Ծծմբական թթվի 800 գ ջրային լուծույթին, որում թթվի մոլային քամինը 2,5 % է, ավելացրել են քանակապես փոխազդելու համար անհրաժեշտ զանգվածով քաղաքացիության 13,24 % զանգվածային քամինը լուծույթ։ Նստվածքն առանձնացնելուց հետո ստացված լուծույթին ավելացրել են 30% զանգվածային քամինը նատրիումի հիդրօքսիդի 400 գ լուծույթ և ստացել նոր լուծույթ։

59

Որքա՞ն է վերցրած լուծույթում ծծմբական թթվի զանգվածը (գ):

60

Որքա՞ն է բարիումի երկինությունաչափատի լուծույթի զանգվածը (գ):

61

Որքա՞ն է վերջնական լուծույթում լուծված նյութերի զանգվածների գումարը (գ):

- (62-64) Որոշակի ծավալով ազոտի (II) օքսիդին ավելացրել են այնքան թթվածին, որ թթվածնի ասոսմների թիվը 3 անգամ զերազանցել է ազոտի ասոսմների թիվը: Ստացված զազային խառնուրդն անցկացրել են 20% զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 700 գ լուծույթով և ստացել 212,5 գ աղ: Այնուհետև լուծույթին ավելացրել են 165 գ ջուր:

62

Որքա՞ն է ազոտի(II) օքսիդի ծավալը (լ, ն. պ.):

63

Ավելացրած թթվածնի ո՞ր մասն է (%) ծախսվել:

64

Որքա՞ն է ալկալու զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

(65-67) Կալցիումի կարրոնատի և այյումինի 1:2 մոլային հարաբերությամբ 308 գ խառնուրդը փոխազդեցության մեջ են դրել ավելցուկով վերցրած աղաթքվի հետ։ Անջատված գազային խառնուրդն անցկացրել են շիկացած ածուխ պարունակող խողովակի միջով (թթվածնի բացակայությամբ)։ Վերջին երկու ռեակցիաներն ընթացել են 50 – ական % ելքերով։

65

Որքա՞ն է այյումինի քանակը (մոլ) պինդ նյութերի տրված խառնուրդում։

66

Որքա՞ն է մեթանի ծավալային բաժինը (%) խողովակից դուրս եկած գազային խառնուրդում։

67

Ի՞նչ զանգվածով նստվածք (գ) կարող է գոյանալ, եթե խողովակից դուրս եկած գազային խառնուրդն անցկացվի կալցիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 296 գ լուծույթի միջով։

**68**

Համապատասխանեցրեք ք նյութի անվանումը և հիդրոլիզի արգասիք թթվի քանածելը.

<b>Անվանում</b>	<b>Բանաձև</b>
ա) էթիլպրոպինատ	1) $C_{17}H_{33}COOH$
բ) եռստեարին	2) $C_{17}H_{35}COOH$
գ) պրոպիլացետատ	3) $C_2H_5COOH$
դ) եռօլեատ	4) $C_{15}H_{31}COOH$
	5) $CH_3COOH$
	6) $C_{17}H_{31}COOH$

**69**

Հաստատեք ք կամ հերքեք ք պնդումների ճշմարտացիությունը տիտրման եղանակով նյութերի քանակական որոշման վերաբերյալ.

- Նրբաշերտային քրոմատոգրաֆիայի (ՆՇՔ) մեթոդը համարվում է ամինոթթուների խառնուրդում առանձին ամինոթթուների անալիզի ամենապարզ և մատչելի մեթոդ, որում բնորոշ որակական ցուցանիշն է հանդիսանում  $R_f$ -ի արժեքը:
- Իբուափրոֆենի քանակական որոշումը կատարվում է թթվահիմնային տիտրման եղանակով,  $0,1\text{U}$  նատրիումի հիդրօրոսիդի լուծույթով  

$$C_{12}H_{17}COOH + NaOH \rightarrow C_{12}H_{17}COONa + H_2O$$
- Փորմալդեհիդի քանակությունը ֆորմալինում որոշում են յոդոմետրիկ տիտրման միջոցով, որը հիմնված է յոդով ֆորմալդեհիդի օքսիդացման և թիոսուլֆատով յոդի ավելցուկի հետագա տիտրման վրա:
- Մրգային քացախում քացախաթթվի կոնցենտրացիայի որոշումը իրականացվում է յոդոմետրիկ տիտրման միջոցով:
- Թթվահիմնային բուֆերը լուծույթ է, որին քիչ քանակությամբ ուժեղ հիմք կամ թթու ավելացնելիս  $pH$ -ը կտրուկ փոխվում է:
- 16,00 մլ  $0,184\text{ U}$   $HCl$ -ի տիտրումը պահանջում է 20,00 մլ  $0,118\text{ U}$   $NaOH$ -ի լուծույթ:

**70**

Մեթանի, էթանի և ածխածին պարունակող երրորդ գազի հավասարամոլային խառնուրդում էթանի զանգվածային բաժինը 1/3 է, իսկ 180 գ զանգվածով խառնուրդի այրման համար պահանջվել է 246,4 լ (ն.պ.) թթվածին: Հաստատեք կամ հերքել պնդումները ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ:

- 1) Երրորդ գազի մեկ մոլեկուլում առկա է 28 պրոտոն:
- 2) Սկզբնական խառնուրդում ածխածին տարրի ատոմների մոլային բաժինը 25 % է:
- 3) Երրորդ գազի մոլային զանգվածը 44 գ/մոլ է:
- 4) Խառնուրդի միջին մոլային զանգվածը 40 գ/մոլ է:
- 5) 150 գ խառնուրդի քանակը 5 մոլ է:
- 6) 18 գ զանգվածով ելային խառնուրդի այրումից ստացված գազն ավելցուկով վերցրած կալցիումի հիդրօքսիդի լուծույթի մեջ անցկացնելիս կստացվի 80 գ նստվածք: